

«ՀՈՐԲԱՏԵՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

Թեմա՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները

Դասվար՝ Մարետա Խանգալոյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՄԱՐԴՈՒ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.....	5
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունն ու դաստիարակչական նպատակները.....	7
ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	11
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ճշգրիտ մոտեցումներ.....	13
Դաս – դիտարկում.....	16
Դաս – հետազոտություն.....	16
Սովորողները վերլուծում են ներկայացված ապացույցները.....	16
Դաս - բանավեճ (ուսումնական երկխոսություն).....	17
Գործնական դաս (դաս - պրակտիկում).....	17
Դաս – խաղ.....	17
Ստեղծագործական դաս.....	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	21

Հետազոտական աշխատանքի նպատակ՝ ընդգծել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման կարևորությունը Հայաստանի հանրակրթական դպրոցներում և բացահայտել առարկայի դաստիարակչական նպատակները:

Հետազոտական հարց՝ ո՞րն է «Ես և շրջակա աշխարհը» առարկայի կարևորությունը և դաստիարակչական նպատակները:

Հիպոթեզ՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկան կարևորագույն առարկա է և ունի մեծ ներդրում երեխայի մտավոր և սոցիալական զարգացման գործում՝ որպես մոլորակի վաղվա բնակիչ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ես և շրջակա աշխարհը» առարկան ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: Այս դասընթացի նպատակն է օգնել երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Այն հուսալի հիմք է միջին և ավագ դպրոցների «Բնագիտություն»,

«Հասարակագիտություն», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Քիմիա»,

«Աշխարհագրություն», «Պատմություն» առարկաների, ինչպես նաև «Առողջ և անվտանգ կենսակերպ» ինտեգրվող բովանդակային ուղղության համար: «Ես և շրջակա աշխարհը» առարկան իր մեջ ընդգրկում է վերոնշյալ առարկաները և աշակերտին, կարծես, պատրաստում է բնական ավելի նեղացված գիտությունների խորը ուսումնասիրմանը բարձր դասարաններում:

Առարկայի բովանդակությունը կառուցվում է «Ես» գաղափարի շուրջ՝ հետագայում ընդլայնելով և բացահայտելով անձի և նրանից դուրս գտնվող շրջանակների բազմաշերտ փոխազդեցությունները: «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և «Ես և տիեզերքը» ինտեգրված միավորները կրտսեր դպրոցականներին թույլ են տալիս պատկերացնել իրենց շուրջն եղած աշխարհի ամբողջական և միևնույն ժամանակ բազմաշերտ էությունը՝ փոխադարձ կապվածություններով և փոխկախվածություններով՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողություն:

Առարկայի ծրագրով նախատեսված բաժիններում մեծ ուշադրություն է դարձված և ընդգրկվում պարզաբանումներ են տրված թե՛ գործունեության ձևերի նկարագրության, թե՛ խաչվող գաղափարների վերաբերյալ, որպեսզի տարրական դպրոցի ուսուցիչը բնագիտական թեմաներում բավարար աջակցություն ունենա:

Հետագրտական աշխատանքի նպատակն է ընդգծել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի կարևորությունը և բացահայտել առարկայի դաստիարակչական նպատակները:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Ի՞նչ է շրջակա միջավայրը, կամ այլ կերպ ասած շրջապատող միջավայրը կամ մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրը՞ Սովորաբար, շրջապատող միջավայր ասելով, հասկանում ենք միայն մեզ շրջապատող միջավայրը, սակայն շրջապատող միջավայրը ավելի լայն հասկացություն է և ընդգրկում է նաև արհեստական միջավայրի (տնտեսություններ, արդյունաբերություն, ձեռնարկություններ և այլ ինժեներական կառույցներ) տարրերը, ինչպես նաև տվյալ հասարակարգի սոցիալական գործոնները՞ Կյանքը կարող է գոյություն ունենալ շրջապատող բնական միջավայրի որոշակի պայմանների շրջանակներում՞ Գիտության ու տեխնիկայի բուռն զարգացման, ազգաբնակչության նյութական, հոգևոր ու գեղագիտական պահանջների անընդհատ աճի ու բարելավման արդի պայմաններում շրջապատող միջավայրի պահպանման ու բնական պաշարների ռացիոնալ օգտագործման խնդիրը ձեռք է բերել կարևորագույն նշանակություն. Մարդն իր գործունեությամբ ակտիվորեն ազդում է շրջապատող բնական միջավայրի վրա, և այդ ազդեցությունը կարող է ունենալ թե՛ դրական, և թե՛ բացասական հետևանքներ. Դրական հետևանքներից են օրինակ այն, որ չորացվել և օգտագործվել են միլիոնավոր հեկտար ճահիճներ ու գերխոնավ հողատարածություններ, որի շնորհիվ խիստ կրճատվել են հիվանդությունները, ոռոգվել են անապատային հողերը, զգալի քանակով անապատներ, ձորեր ու լեռնալանջեր կանաչապատվել ու անտառապատվել են, քաղաքներում, գյուղերում ու ավաններում ստեղծվել են անտառագոտիներ՞ Բացասական հետևանքներից են, օրինակ, այն որ Վառելիքի այրումից յուրաքանչյուր տարի մթնոլորտ են անցնում միլիարդավոր տոննաներով ածխաթթու գազ, 20 միլիարդ տոնայից ավելի արդյունաբերական և այլ թափոններ՞ Մթնոլորտում ածխածնի երկօքսիդի ավելացումը ջերմոցային էֆեկտի շնորհիվ խորացնում է օդի և Երկրի մակերևույթի ջերմաստիճանի բարձրացման վտանգը՞ Աշխարհի խոշոր շատ քաղաքներում օդը վտանգավոր է դարձել մարդու առողջության համար.

Օդի աղոտության պատճառով իջնում է արտադրողականությունը, քայքայվում են մետաղական ու բետոնե կոնստրուկցիաները, շենքերը, շինություններն ու հուշարձանները. Ջգալի վնաս է հասցվել նաև բուսական ու կենդանական աշխարհին. Անհետացել են բույսերի և կենդանիների բազմաթիվ հազվագյուտ և թանկարժեք տեսակներ՝ Արժեքավոր կենդանիների շատ տեսակներ գտնվում են անհետացման շեմին և գրանցված են «Կարմիր գրքում».

Մարդը, մաս կազմելով բնական էկոհամակարգին, օգտվում է նրա ռեսուրսներից՝ օդից ջրից հողից, կենդանական ու բուսական աշխարհից ու իր կյանքի ու գործունեության ընթացքում ներգործում է այդ էկոհամակարգի վրա իր թափոններով, մթնոլորտ արտանետումներով ու կեղտաջրերի արտահոսքերով: Բնականաբար, այդ ընթացքում նա ընկալում է բնությունը որպես իրեն շրջապատող միջավայր, որից նա օգտվում է ու որի վրա ներգործում: Եթե այդ երկուսը՝ օգտվելն ու ներգործելը չեն գերազանցում որոշակի սահմանը, բնական էկոհամակարգն իր ներքին բնական կարողությունների շնորհիվ կարողանում է վերականգնել իր բնական հավասարակշռությունը և նյութերի այդ շրջապտույտը շարունակվում է:

Այն դեպքում, երբ այդ ներգործությունը գերազանցում է բնական էկոհամակարգի ինքնավերականգման կարողության սահմանը, տեղի է ունենում էկոհամակարգի վերաճնավորում: Բնական լանդշաֆտները վեր են ածվում գյուղատնտեսական հանդակների, բնակավայրերի, ճանապարհների, ջրամբարների, արդյունաբերական տարածքների և այլն: Այսինքն, ձևավորվում է մարդուն շրջապատող նոր, մարդածին շրջակա միջավայր: Այդպիսի միջավայրն իրենից ներկայացնում է բնական միջավայրից առանձնացած, կամ օտարված, ոչ բնական միջավայր: Հասկանալի է, որ այդպիսի միջավայրն իր բաղադրիչներով չի կարող չունենալ բացասական ազդեցություն բնական էկոհամակարգի բնականոն ընթացքի վրա:

Շրջակա միջավայրի պահպանության, բնական էկոհամակարգի բնականոն ընթացքի պահպանման համար այսօր աշխարհը կանգնած է լուրջ խնդիրների լուծման առջև: Բնության համաշխարհային հիմնադրամը, ՄԱԿ-ը և մի շարք այլ կարևոր կազմակերպություններ ամեն տարի հանդես են գալիս նոր ծրագրերով վերոհիշյալ

խնդիրները լուծելու և մարտահրավերները հաղթահարելու համար: Քովիդ-19 տեսակի համավարակը այդ մարտահրավերներից մեկն է:

Շատ հաճախ մարդը կանգնում է բնական մարտահրավերների առջև կամ չի կարողանում դրանք հաղթահարել իր իսկ անգիտության և անհրաժեշտ գիտելիքներ չունենալու պատճառով: Ուստի շատ կարևոր է վաղ հասակից երեխային սովորեցնել ճանաչել ինքն իրեն և իրեն շրջապատող աշխարհը՝ որպես բնական մարտահրավերներին հաղթահարող և բնությունը պահպանող վաղվա սերունդ: Այդ նպատակով Հայաստանի հանրակրթական դպրողներում իր մեծագույն դերն ունի «Ես և շրջակա աշխարհը» առարկան:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունն ու դաստիարակչական նպատակները

Ի՞նչ է իրենից ենթադրում «Ես և շրջակա աշխարհը» առարկան կամ գիտությունը: Դասական լեզվով ասված՝ այն գիտությունների խումբ է, որը գիտական մեթոդներով ձգտում է լուսաբանել կանոնները, որոնք ղեկավարում են բնական աշխարհը՝ Հիմնվելով ֆորմալ գիտությունների վրա՝ բնական գիտությունները փորձում են մաթեմատիկական տեսքի բերել բնական երևույթները՝ Բնագիտություն կամ բնական գիտություններ տերմինը օգտագործում են բնագիտամաթեմատիկական գիտությունները հումանիտար գիտություններից տարանջատելու համար, ինչպես օրինակ «Պատմություն» առարկան

«Բնագիտություն» առարկայից, որը փորձում է գիտական մեթոդներով ուսումնասիրել բնությունը, մարդուն, նրա վարքագիծը և բնության մեջ գոյություն ունեցող օրինչափությունները.

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման նպատակը հիմնական դպրոցում տարբեր բնագիտական առարկաներից ձեռք բերած գիտելիքների ընդհանրացման ու մեկ միասնական համակարգով ներկայացման միջոցով սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումն է, նրանց մտավոր որակների, կենդանի և անկենդան բնության մասին գիտելիքները ուսումնական գործընթացում, անձնական և

հասարակական կյանքում կիրառելու կարողությունների զարգացումը: Առարկայի բովանդակության կառուցման հիմքում ընկած է համակարգային մոտեցումը, համաձայն որի՝ օբյեկտներն ու երևույթները դիտարկվում են որպես միմյանց հետ փոխազդող տարրերի ամբողջական համակարգեր, օրինակ՝ բնական համակարգեր (օրգանիզմ, էկոհամակարգ և այլն), տեխնիկական համակարգեր (համակարգիչ, հրթիռ և այլն), սոցիալական համակարգեր (կրթական համակարգ, առողջապահական համակարգ և այլն) և այլն: Բոլոր թեմաների ընտրությունը կատարվել է հաշվի առնվելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Այժմ եկեք մի փոքր հեռանանք դասական սահմանումից և «Ես և շրջակա աշխարհը» առարկան պատկերացնենք, որպես մարդու և իր շուրջը գոյություն ունեցող ամեն ինչի մասին գիտություն: Ինչո՞ւ է մեր հասարակությանը անհրաժեշտ իմանալ այն ամենի մասին ինչ մեր շուրջն է: Եվ ինչո՞ւ է դպրոցին անհրաժեշտ այս առարկան, այն էլ երկրորդ դասարանից սկսած:

Առարկայի ուսումնական նպատակը տարրական դպրոցում աշխարհի ամբողջականության՝ նրա բազմազանության և փոխկապվածությունների, բնության, հասարակության և սոցիալմշակութային օբյեկտների և երևույթների միասնականության ամբողջական պատկերի ձևավորումն է, ինչպես նաև՝ հոգեպես, ֆիզիկապես առողջ և ներդաշնակ զարգացող, ստեղծագործ անձի ձևավորումը, որն ունի էկոլոգիական, մշակութաբանական գրագիտություն, մարդկանց և բնության հետ փոխհարաբերություններում ունի բարոյաէթիկական նորմերին համապատասխան, չվնասող, անվտանգ, պատասխանատու վարքագիծ և հայրենասեր քաղաքացու նկարագիր:

Մասնավորապես՝ առարկան նպատակ ունի սովորողներին օգնելու.

- Հասկանալ սեփական ինքնությունը՝ որպես անձ, անհատականություն, ունենալ ազգային և համերկրային աշխարհայացք, իմանալ բազմազանության մասին և ընդունել այն,

- Արդյունավետ հաղորդակցվել, հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետներ, արտահայտել սեփականը,

- Ձեռք բերել փորձառություններ, որոնք հիմնված են իրենց հետաքրքրության վրա և խթանում են իրենց շրջակա աշխարհն ուսումնասիրելու հանդեպ հետաքրքրություն,
- Ուսումնասիրել աշխարհը՝ Հայաստանի տեսանկյունից,
- Կիրառել ռեֆլեքսիվ մտածողություն տարբեր իրավիճակներ վերլուծելու, խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու հարցում,
- Զարգացնել բնագիտական հետազոտությունների համար անհրաժեշտ հաղափարներ, հմտություններ և սովորություններ,
- Գնահատել, թե ինչպես է գիտությունը ազդում մարդկանց և շրջակա միջավայրի վրա, ունենալ պատասխանատու և խնայող վերաբերմունք մարդկային և բնական ռեսուրսների հանդեպ,
- Տրամադրել հիմնական բնագիտական տերմիններ և հասկացություններ, որոնք կօգնեն նրանց հետագա ուսումնառության ընթացքում հասկանալ իրենց և իրենց շրջապատող աշխարհը,
- Գնահատել և ընտրել արժանահավատ տեղեկատվություն, հաշվի առնել տարբեր տեսակետներ և խորաթափանցություն դրսևորել լավ մտածված եզրահանգումների և պատասխանատու որոշումների կայացման հարցում,
- Հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց
- Կարևորել հասարակական գործընթացները, գիտակցել սեփական արձագանքի հնարավոր ազդեցությունը հասարակության վրա,
- Ցուցաբերել նվիրվածություն սոցիալական համախմբմանը՝ գնահատելով հասարակության բազմազանությունը,
- Տեղեկացված լինել որոշումների կայացման էթիկական հետևանքների մասին,
- Ունենալ պատասխանատու և գիտակից վերաբերմունք սեփական և ուրիշների առողջության և անվտանգության հանդեպ, ունենալ համապատասխան սովորություններ
- Կրել անձնական և կոլեկտիվ պատասպանատվություն՝ ընդհանուր բարիքի համար փոփոխություններ կատարելու համար:

Առարկայի հիմնական խնդիրներն են.

- Երեխայի սոցիալականացումը,
- Ճանաչողական ակտիվության և շրջակա աշխարհի մասին գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույնության ձևավորումը,
- Անձնային, ճանաչողական, հաղորդակցական, ստեղծագործական բազմաբնույթ կրթական գործելակերպի զարգացումը,
- Մեղիագրագիտության ձևավորումը,
- Բնության, մարդկանց, հայրենիքի հանդեպ սիրո, հարգանքի և խնայող վերաբերմունքի դաստիարակությունը,
- Սեփական և ուրիշների առողջության հանդեպ գիտակից և պատասխանատու վերաբերմունքը,
- Իր նախնիների, անցյալի հանդեպ հարգանքը, պատմական և մշակութային ժառանգության պահպանության ցանկությունը

ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է հետաքրքրությունների ձևավորման, հարցեր ձևակերպելու և այդ հարցերի պատասխանները քննելու, վերլուծելու և գտնելու, ինչպես նաև համագործակցությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացման, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց և բնության նկատմամբ բարյացակամության, հոգատարության ձևավորման ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Առարկայի բովանդակությունը կառուցվում է «Ես» գաղափարի շուրջ, հետագայում ընդլայնելով ես-ի շուրջն եղած շրջանակը՝ բացահայտելով անձի և այդ շրջանակների բազալերտ փոխազդեցությունները: «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և

«Ես և տիեզերքը» ինտեգրված միավորները կրտսեր դպրոցականներին թույլ են տալիս պատկերացնելու իր շուրջն եղած աշխարհի ամբողջական և միևնույն ժամանակ բազմաշերտ էությունը իր փոխադարձ կապվածություններով և փոխկախվածություններով՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողությունը: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան որիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Այնուհետև պատկերացումներն ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը,

քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակականվայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցման հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ, նախնական պատկերացումներ են ձեռք բերում բնության, տիեզերքի և դրանցում գործող օրենքների և օրինաչափությունների մասին: Բացի բնագավառներով պայմանավորված բովանդակությունն ու կարողությունները առարկան ներառում է նաև մի շարք կարևորվող բովանդակային ուղղություններ, ինչպիսիք են՝ ֆինանսական կրթության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, քաղաքացիական էկոլոգիական կրթության, բռնության և հալածանքի կանխարգելման և մեղիագրագիտության վերաբերյալ ուսուցում:

«Ես և շրջական աշխարհը» առարկայի ուսումնասիրման գործընթացում կրտսեր դպրոցականները հնարավորություն են ունենում.

- Համակարգելու, ընդլայնելու, խորացնելու իրենց ունեցած պատկերացումները բնության և հասարակական օբյեկտների մասին

- Իմաստավորելու մարդու և բնության միջև փոխհարաբերությունների բնույթը, հասարակական տարբեր խմբերի ներսում առկա փոխհարաբերություններն ու օրինաչափությունները

- Յուրացնելու և ցուցաբերելու առողջ ապրելակերպին բնորոշ վարքագծեր և սովորություններ, անվտանգության կանոնները, էկոլոգիապես գրագետ և բարոյական վարք բնության գրկում և հասարակության մեջ

- Գիտակցելու շրջապատի մարդկանց հանդեպ հարգալից և ուշադիր վերաբերմունքի կարևորությունը

- Ինայող վերաբերմունք ցուցաբերելու բնության, պատմական և մշակութային արժեքների հանդեպ

Բնության պահպանությունը բոլորիս սուրբ պարտքն է, և մենք՝ մեծ թե փոքր, պարտավոր են խնայողաբար օգտագործել բնությունը և անաղարտ պահել այն: «Ես և շրջական աշխարհը» առարկան էլ ստեղծում է բոլոր մտավոր նախադրյալները դրա համար:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ճշգրիտ մոտեցումներ

Ինչքան կարևոր է «Ես և շրջակա աշխարհը» առարկան երեխայի մտավոր զարգացման գործում, նույնքան կարևոր է ուսուցչի ճիշտ դասավանդումը և ներդրումը այդ զարգացմանը: «Ես և շրջակա աշխարհը» առարկան դասավանդելիս կարևոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

- հաշվի առնել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առանձնահատկությունները՝ ուսումնասիրվող առարկաների և երևույթների բազմազանությունը, ուսումնական նյութի իմացության կարևորությունը յուրաքանչյուր սովորողի համար,

- այն հնարավորությունները, որ տալիս է շրջապատող աշխարհին ուսումնասիրելու գործընթացը (դիտումը, խաղային և այլ գործունեությունը, ստեղծագործական մոտեցումը, մոդելավորումը),

- կրտսեր դպրոցականների կողմից շրջակա միջավայրը ճանաչելու առանձնահատկությունները (բնության և հասարակության օբյեկտների գրավչությունը, ընկալման հուզական երանգավորումը, երևույթների միջև եղած կապերի և կախվածության ակնառությունը),

- կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան հնարավորությունները և «կախվածությունները/հակումները» (առաջատար գործունեությունը, խաղալու հակվածությունը, ինքնուրույնության, ստեղծագործելու, ամեն ինչ փորձելու պահանջումները և այլն),

- ուսուցման գործընթացում որևէ մեթոդի գերակայությունը: Ըստ այդմ՝ առաջարկվում է «Ես և շրջակա աշխարհը» առարկան ուսուցանելիս կիրառել դասերի հետևյալ տիպերը.

- դաս-դիտարկում
- դաս-հետազոտություն
- դաս-բանավեճ (ուսումնական երկխոսություն)
- գործնական դաս (դաս-պրակտիկում)
- դաս-խաղ
- ստեղծագործական դաս:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասի տեսակն ընտրելիս ուսուցիչը պետք է առաջնորդվի հետևյալ պահանջներով.

1. Շրջապատող աշխարհի առարկաների զգայական ընկալման հնարավորության ստեղծում:

Աշխարհի ճանաչման գործընթացը հենվում է իրականության առարկաների ու երևույթների մասին երեխաների ունեցած սենսորային պատկերացումների վրա: Բոլորին հայտնի է, թե ինչ նշանակություն ունի զգայական ընկալումը. նրանից են կախված շրջապատող առարկաների և երևույթների մասին տեղեկատվության բազմազանությունը, սենսորային պատկերացումների խորությունը և հավաստիությունը: Ցավոք, այսօր կրտսեր դպրոցականի զգայական փորձը շատ աղքատ է, ինչը լուրջ դժվարություններ է առաջացնում ուսումնական գործունեության ընթացքում: Դա պարտավորեցնում է ուսուցչին հատուկ ուշադրություն հրավիրել, հատկապես 2-րդ դասարանում, դաս-դիտարկմանը և գործնական դասին:

2. Ճանաչողության վերարտադրողական, արտադրողական (պրոդուկտիվ) և ստեղծագործական մեթոդների նպատակահարմար զուգորդման ապահովում:

Ուսուցման վերարտադրողական մեթոդները ակտիվացնում են հոգեկան այնպիսի պրոցեսների զարգացումը, ինչպիսիք են՝ ընկալումը և հիշողությունը, և չեն նպաստում մտածողության և երևակայության զարգացմանը: Պարզ է, որ ուսումնաճանաչողական գործունեության զարգացումն առանց հոգեկան այդ գործընթացների, անհնար է: Եթե սովորողները պետք է տիրապետեն ուսումնական գործունեությամբ զբաղվելու՝ սովորելու կարողությանը, ապա ենթադրվում է, որ նրանց մեջ պետք է զարգանան ճանաչողական հետաքրքրությունը (սիրում եմ սովորել, հետաքրքիր է), ներքին մոտիվացիան (գիտեմ՝ ինչու եմ սովորում), վերլուծական տարրական կարողությունները (կարող եմ ընդունել ուսուցչի գնահատականը և ինքնուրույն գնահատել իմ գործունեությունը): Ամենակարևորը՝ կրտսեր դպրոցականը կարող է պատասխանել ոչ միայն «Ի՞նչ եմ անում» հարցին, այլև «Ինչպե՞ս եմ ես դա անում» հարցին: Իսկ այս ամենը ուսումնական գործընթացում հենվում է մտածողության և երևակայության վրա: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում դաս - հետազոտությունը և դաս - բանավեճը:

3. Տվյալ տարիքին համապատասխան գործունեության տեսակների ընտրություն և կիրառում:

Ինչպես գիտենք, խաղային գործունեությունը շարունակում է մնալ կրտսեր դպրոցականի առաջատար գործունեության տեսակներից մեկը: Հոգեբանները նշում են, որ որևէ տարիքին բնորոշ առաջատար գործունեությունը բնութագրվում է երեք կարևոր ցուցանիշներով.

- այն համապատասխանում է տվյալ տարիքի երեխայի զարգացման պահանջներին,

- հատուկ ազդեցություն է ունենում անձի հոգեկան զարգացման վրա,

- այն հիմք է հանդիսանում զարգացման հաջորդ տարիքային փուլին բնորոշ առաջատար գործունեության ձևավորման համար:

Ինչ խոսք, տարիքային որևէ փուլին բնորոշ առաջատար գործունեությունը չի ավարտվում ինչ-որ կոնկրետ ժամանակ. գործունեության նախորդ տեսակը երեխայի համար ակտուալ է մնում նաև զարգացման մյուս փուլերում: Հետևաբար, պետք է հաշվի առնել, որ կրտսեր դպրոցական տարիքում խաղը ոչ միայն ցանկալի է, հետաքրքիր է, հեշտ է, այլև շատ արժեքավոր է ուսումնական գործունեության զարգացման համար: «Ես և շրջակա աշխարհը» առարկան մեծ հնարավորություն է տալիս տարբեր խաղերի՝ դիդակտիկ, թեմատիկ - դերային, շարժական, կառուցողական և այլն, կազմակերպման համար: Դրանով է բացատրվում դասի հատուկ տիպի՝ դաս - խաղի առանձնացումը:

4. Սովորողների մեջ ճանաչողական նախաձեռնության և ստեղծագործական ակտիվության զարգացման հնարավորության ստեղծում:

Կրտսեր դպրոցականները շատ են սիրում ստեղծագործական տարբեր բնույթի առաջադրանքներ, որոնց կատարման ժամանակ նրանք կարող են երևակայել, ստեղծագործել, վերափոխել շրջակա աշխարհի կերպարները: Ստեղծագործական ինքնուրույնությունը, երևակայությունը, ճանաչողական նախաձեռնությունը զարգացնող վարժությունների կիրառումը պարտադիր պայման է «Ես և շրջակա աշխարհը» առարկան դասավանդելիս՝ ստեղծագործական դասի ձևով: Վերոնշյալ դասերի տեսակներից յուրաքանչյուրն ունի հստակ կառուցվածք՝ բնորոշվելով

ուսուցման այն հիմնական մեթոդով, որն արտացոլում է տվյալ դասի առանձնահատկությունը:

Ի՞նչ են իրենցից ենթադրում «Ես և շրջակա աշխարհը» առարկան ուսուցանելիս կիրառվող դասերի տիպերը:

Դաս – դիտարկում

Ուսուցման հիմնական մեթոդը. շրջապատող իրականության օբյեկտների (երևույթների, իրադարձությունների) ընկալում՝ դրանց մասին տեղեկատվություն, փաստեր ստանալու, նախնական պատկերացում կազմելու համար:

Դաս - հետազոտություն

Ուսուցման հիմնական մեթոդը. օբյեկտների գործողությունների (վարքի, զարգացման, աճի) ուսումնասիրություն, նպատակաուղղված դիտարկում՝ առաջադրված վարկածի հաստատման կամ հերքման նպատակով: Օրինակ,

«Միջատներ» թեմայի ուսումնասիրության սկզբում երեխաների առաջ խնդիր է դրվում՝ «Հնարավո՞ր է սարդին համարել միջատ, թե՞ ոչ»: Առաջադրվում են հետևյալ վարկածները.

- սարդը կարող է միջատ համարվել,
- սարդը չի կարող միջատ համարվել:

Սովորողները վերլուծում են ներկայացված ապացույցները

• Սարդը կարող է միջատ համարվել, քանի որ այն նման է շատ միջատների (բզեզ, մեղու, ճանճ), կարող է սողալ (ինչպես խավարասերը, մրջյունը), նրա մարմինը և թաթիկները կազմված են մասերից (ինչպես բոլոր միջատներինը):

• Սարդին միջատ համարել չի կարելի, քանի որ նրա մարմինը կազմված է երկու մասից (իսկ միջատներինը՝ երեք), չունի թևեր և բեղիկներ, ունի ոչ թե վեց, այլ ութ վերջավորություն:

Ուսուցիչն առաջարկում է համեմատել որևէ միջատի և սարդի նկարները, գտնել ակնառու տարբերությունները: Սովորողները որպես աչքի զարնող տարբերություն, նշում են ոտքերի թիվը, ինչն էլ որոշիչ հատկանիշ է դառնում այդ կենդանու դասակարգման համար. սարդը չի պատկանում միջատների դասին, այլ՝ սարդակերպերի, չնայած, որ և՛ միջատները, և՛ սարդակերպերը պատկանում են նույն՝ հողվածոտանիների տիպին:

Դաս - բանավեճ (ուսումնական երկխոսություն)

Ուսուցման հիմնական մեթոդը. քննարկում՝ ստացված ուսումնական տեղեկատվության ընդհանրացման, համակարգման, ամրակայման նպատակով: Կառուցվածքային հիմնական տարրը. երկխոսություն: Կառուցվածքային լրացուցիչ տարրերը. տեղեկատվության փոխանակում և դրա խմբային վերլուծություն, դիտարկում, եզրակացությունների ձևակերպում:

Գործնական դաս (դաս - պրակտիկում)

Ուսուցման հիմնական մեթոդը. գործնական աշխատանք՝ առարկաների (օբյեկտների, երևույթների) հիմնական հատկանիշների որոշման (ստուգման, ճշտման) նպատակով: Գործնական դասեր կարելի է կազմակերպել ուսումնական ծրագրով նախատեսված ցանկացած բաժնի ուսումնասիրության ժամանակ, օրինակ՝ «Երկիր մոլորակը», «Բնությունը և մենք» և այլն: Այս տեսակի դասերի կազմակերպումը արդյունավետ է նաև ինքնաճանաչման նպատակով, երբ գործնական աշխատանքներ են իրականացվում ինքնադիտման ուղղությամբ. «Լսենք՝ ինչպես է բաբախում մեր սիրտը, զգանք՝ շնչելու ժամանակ ինչպես է բարձրանում և իջնում մեր կուրծքը», «Նայե՛ք՝ ինչ գույն ունեն ձեր ընկերների աչքերը», «Չափենք մեր հասակը և որոշենք քաշը» և այլն:

Դաս - խաղ

Ուսուցման հիմնական մեթոդը. դիդակտիկ (դերային) խաղ՝ ստացած գիտելիքներն ամրակայելու և չյուրացված ուսումնական նյութը պարզելու նպատակով:

Օրինակ՝ «Տարվա եղանակներ» թեման ուսումնասիրելիս կարելի է երեխաներին առաջարկել խաղալ «Անտառային ժողով» խաղը: «Պատկերացրե՛ք, որ մենք բոլորս անտառի բնակիչներ ենք՝ միջատներ, գազաններ, թռչուններ և այլն: Աշուն է: Անտառում գազաններն ու թռչունները, միջատներն ու սողուններն անհանգստանում են. շուտով կսկսվեն ցրտերը: Նրանք որոշում են ժողով հրավիրել և պարզել, թե իրենցից ով ինչպես է պատրաստվել ձմռանը, ինչ խնայողություններ ունի»: Երեխաները բաժանում են դերերը, օրինակ, արջն ընտրվում է ժողովի նախագահող, փայտփորիկը՝ քարտուղար: Ժողովին ներկա անտառի բնակիչները հերթով ներկայացնում են, թե իրենք ինչպես են նախապատրաստվում ձմռանը, ինչպես են խնայողություն կատարել, ինչով են այդ խնայողությունները օգնելու ձմռանը: Իհարկե, ուսուցչին ուղղորդում է խաղը, անհրաժեշտության դեպքում օգնում է սովորողներին ճիշտ տեղեկատվություն հաղորդել, իրենց դերերը կատարել և այլն:

Ստեղծագործական դաս

Ուսուցման հիմնական մեթոդը. երևակայվող իրադրության կառուցում, սխեմավորում՝ օբյեկտի փոփոխման (ստեղծագործաբար վերափոխման) նպատակով: Օրինակ, «Առողջություն և անվտանգ կենսագործունեություն» թեմայի շրջանակում կարելի է սովորողներին առաջարկել պատմություններ հորինել այս կամ այն մրգի, բանջարեղենի, հիգիենայի պարագայի, ֆինանսական երևույթի մասին, խոսել նրա անունից, երկխոսություններ կազմել տարբեր ուտելիքների, մարմնի տարբեր օրգանների, տարադրամների միջև և այլն: Այս կամ այն տեսակի դասերի ընտրությունը ուսուցչին հնարավորություն է տալիս առարկայի բովանդակությունն օգտագործել շրջապատող աշխարհի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը բորբոքելու, նրանց մեջ կայուն գիտելիքներ և կարողություններ ձևավորելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի սկզբանե առաջարկված հետազոտության հիպոթեզը՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկան կարևորագույն առարկա է և ունի մեծ ներդրում երեխայի մտավոր և սոցիալական զարգացման գործում՝ որպես մոլորակի վաղվա բնակիչ, ճիշտ է, քանի որ այն տալիս է մարդուն՝ Երկրում հարմարվելու հիմնային և կարևորագույն գիտելիքներ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան միջառարկայական կապ է ստեղծում մի շարք այլ առարկաների հետ՝ ինչպիսիք են «բնագիտություն», «կենսաբանություն»,

«քիմիա», «ֆիզիկա», «աշխարհագրություն», որոնք աշակերտը ուսանելու է բարձր դասարաններում և արդեն իսկ ունի պատկերացումներ այդ առարկաների մասին: Այն տրամադրում հիմնական բնագիտական տերմիններ և հասկացություններ, որոնք կօգնեն աշակերտներին հետագա ուսումնառության ընթացքում հասկանալ իրենց և իրենց շրջապատող աշխարհը:

Առարկայի կարևորությունը կայանում է նրանում, որ 7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է հետաքրքրությունների ձևավորման, հարցեր ձևակերպելու և այդ հարցերի պատասխանները քննելու, վերլուծելու և գտնելու, ինչպես նաև համագործակցությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար:

Առարկան սովորեցնում է ճանաչել երեխային ինքն իր հետ և ծանոթացնում է իր շրջապատող աշխարհին: Օգնում է արդյունավետ հաղորդակցվել, արտահայտել սեփականը, ձեռք բերել փորձառություններ, որոնք հիմնված են իր հետաքրքրության վրա և խթանում են իր շրջակա աշխարհն ուսումնասիրելու հանդեպ հետաքրքրության մեծացմանը:

Առարկայի դաստիարակչական նպատակներից է նաև ծանոթությունը սեփական հայրենիքի հետ, քանի որ այն օգնում է ուսումնասիրել աշխարհը՝ Հայաստանի տեսանկյունից:

Առարկան օգնում է հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց:

Եվ, թերևս, ամենակարևոր դաստիարակչական նպատակն այն է, որ աշակերտը սովորում է կրել անձնական և կոլեկտիվ պատասխանատվություն՝ ընդհանուր բարիքի համար փոփոխություններ կատարելիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Կյանքի հմտություններ» առարկայի ուսուցիչների ձեռնարկներ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ դասարանների համար, ԿԱԻ, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան 2001, 2002, 2003:
2. Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 2-4-րդ դասարանների համար, Երևան 2006, լրամշակվել և վերահրատարակվել է 2008թ.-ին:
3. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ», ԿԳՆ ԿԱԻ, Երևան 2010

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ